

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 բուրլի. կես տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄԵԼԻ» ԼՐԱԳԻՐԸ

Ապրիլի 1-ից մինչև տարվայ վերջը կար-
ժենայ ՈՒԹԸՐ րուրի:

Դիմել Тифлисъ, редакция «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
ապրիլի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղօրօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Գաղաքական տեսութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Ընթերցողի Օրագրեր. Երևանի բա-
ղաքային նիստի որոշումները. Թատրոն և
երաժշտութիւնը. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ
Պարսկաստանից. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գաղաքական մասնուր թէ և շատ հար-
ցերով է զբաղված ներկայումս և այդ
հարցերն էլ մանր ու աննշան են ըստ
էութեան, բայց և այնպէս մասնուր ընդ-
հանուր տրամադրութեան մէջ մի ինչ
որ սպասողական գիծ է նկատվում: Բո-
լորը սպասում են թէ ինչ լուրեր կը
ստացվեն ծովային պատերազմի բեմից:

Մի քանի շաբաթ արանից առաջ շատ
յամառ կերպով մասնուր խօսում էր խա-
ղաղութեան պահանջների կամ հաշտու-
թեան կայացնելու մասին: Եւրօպական
խորոք օրգանները, քաղաքագէտները բո-
լորովին ժամանակակից և նորին իսկ
պարտաւորական էին համարում հաշ-
տութեան մասին բանակցութիւններ ըս-
կանք: Եւ նորին իսկ կիսապաշտօնական
ակնարկներ երևացին եւրօպական լրա-
գիրներում: Բայց յետոյ պարզվեց, որ
Ռուսաստանի կողմից ոչ մի այդպիսի
փորձ չէ արված և զիտաւորութիւն էլ
չը կայ. ներկայումս այդ անելու: Իսկ
ինչ վերաբերում է Եւրօպային՝ նա
քաջակերպ իր տարած յաղթութիւն-
ներով և խրախուսված իր ծրագրի աշող
իրագործումով մինչև այժմ, տրամադրու-
թիւն չէ զգում հաշտութեան մասին խօ-
սելու:

Այժմ երկու պետութիւններն էլ դար-
ձեալ զբաղված են պատերազմական բե-
մերի վրա կատարվող գործերով թէ ցա-
մաքի և թէ ծովի վրա:

Մերձաւոր Արևելքը դարձեալ խօսեց-
նել է տալիս իր մասին և այն էլ բա-
ւական լուրը կերպով: Յունական տարրի
համարձակ պահանջները իրենց կղզում,
յունական յիգիփոսական խմբերի յար-
ձակումները բոլորական գրեզներ վրա,
ստեղծում են բարդ դրութիւն Մակեդո-
նիայի սահմաններում: Թիւրք կառավա-
րութիւնն էլ, հաւատարիմ իր հին քաղա-
քականութեան, չէ մոցնում բարենորո-
գութիւններ և չէ խաղաղացնում երկիրը
այն միջոցներով, որոնք մտնում են
Միւլըցընէի մէջ կայացած ռուս-աւստ-
րիական համաձայնութեան պայմանա-
թղթի մէջ:

Մարօկկոյի հարցը, որ յաջող կերպա-
րանք էր ստացել, այժմ կրցրել է իր
սուր բնաւորութիւնը: Փրանսիայի, Ան-
գլիայի և Գերմանիայի քաղաքագիտական
շրջանները որոշ գաղաղութիւն են գործ
դնում չը բարդեցնելու քաղաքական աշ-
խարհի միջոցները նոր կնիքներով:

Պարլամենտական կեանքի մէջ աչքի
ընկնող երեւոյթներ կան, բայց դրանք
չեն:

կրում են ներքին և կուսակցական բնա-
ւորութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳՐԸ

X

Միթէ դժբախտութիւն չէ, — հարցնում էի
ես իմ անցեալ յօդուածներից մէկում, — հերո-
սութիւն տրվում է հայ կնոջ միայն մի պայ-
մանով, — որ նա լինի նահապետական կին,
այսինքն խաւար, տղէտ, ճնշված դարաւոր
նախադարձների, ասիական բռնակալ հաս-
կացողութիւնների տակ: Հէնց որ հայ կինը
դուրս է գալիս այդ դրութիւնից, հէնց որ
փորձ է շատ հաղորդակից է դառնում ազա-
կեանքին, հնարաւորութիւն է ստանում զար-
գացնելու իր մարդկային արժանաւորութիւն-
ները, նա դառնում է իր ցեղի ինքնաւարտու-
թեան ամենամեծ թշնամին, օտարացման ա-
մենամահախոյ, անյաղթարելի մի գործիչ:

Այս առիթով ես մի նամակ ստացայ, որ
գրել է հայ տիկիններից մէկը:

Իմ անձնօթ նամակագիրը ընդունում է,
որ ես ճիշտ եմ պատկերացրել հայ կնոջ պատ-
մական և ժամանակակից դերը: Ընդհանրապէս
անհերքելի է ներկայի հայուհու տիպը — օտա-
րացած, արագ օտարացող, անտարբեր դէպի
իր ցեղային ինքնապաշտպանութեան, ինքնա-
որոշման ահաւոր հարցերը:

Իմ յօդուածում ես կարող էի միայն արձա-
նագրել իրողութիւնը, առանց նրա բազմաթիւ
պատճառների լուսաբանութեան գիւմելու:
Պատճառները առանձին տեղ են բռնում, չա-
փազանց ծանրակշիւ են և ընդարձակ ուսում-
նաիրութիւն են պահանջում: Կարելի էր, օ-
րինակ, ցոյց տալ թէ ինչ ահագին դեր է կա-
տարում հայ կնոջ օտարացման մէջ հայ տղա-
մարդը: Եւ ահա այժմ իմ նամակագիրը հայու-
հին յիշեցնում է ինչ այդ իրողութիւնը: Մի-
այն մի փաստ է նա բերում, և ես կանգ
կառնեմ հէնց այդ փաստի վրա, զանց առնելով
ուրիշ բազմաթիւ երեւոյթներ, որոնք յայտնի
են ամեն մէկին:

Անշուշտ հայ կանանց նորագոյն, ժամանա-
կակից տիպը շատ բացառութիւններ էլ ունի:
Կան և շատ այնպիսի մայրեր, որոնք ուղղւոյ
են դաստիարակել իրանց զաւակներին մայրե-
նի լիզուով, ցեղային ինքնապաշտպան սկզբունք-
ների վրա:

Եւ ահա այդպիսիների դրութիւնը իսկ որ
ծանր է, անտանելի: Կայ ձգտում, կայ գի-
տակցութիւն, բայց կան միջոցներ: Ահա
հարց:

Դաստիարակութիւնը մի ներշնչմանը չէ
միայն, այլ և մի բարդ գործ, մի ամբողջ դե-
տութիւն, որի համար գործիքներ, գէներ են
հարկաւոր: Մենք մարդը զրկված ենք սեփա-
կան դպրոցներից: Սա արդէն ինքն ըստ ին-
քեան մի սոսկալի հարուած է, որ ոչնչացնում
է ազգային դաստիարակութեան ջանքերի մե-
ծադոյն մասը: Բայց զրկվածներին միայն յու-
սահատութիւն չէ տուած, մարդը ամեն աս-
պարէզում, ամեն հանգամանքներ մէջ ինքնա-
պաշտպանութեան հնարներ գտնում է: Եւ այս
դէպքում էլ կայ ինքնապաշտպանութեան մի-
ջոցը — ընտանեկան կրթութիւն: Տան մէջ ըն-
տանիքների նուիրական ծոցում է կատարվում
այն, ինչ չէ թոյլատրվում է բացարձակ, հրա-
պարակով, հասարակական հիմնարկութիւննե-
րի մէջ:

Սա շատ բնական, շատ իրաւացի ու ար-
դար բան է բոլոր զրկվածների համար:

Եւ ահա երեակայեցէ մի այսպիսի դրու-
թիւն: Պարտաճանաչ մայրը ամենայն յօժարու-
թեամբ, ամենայն սիրով աշխատում է աղետի
իր երեխաներին շրջապատի կանոց, օտա-
րացնող ազդեցութիւններից: Բայց ինչ կայ
նրա ձեռքի տակ՝ այդպիսի մի պաշտօն կա-
տարելու համար:

Ոչինչ: Հայ երեխան ընթերցանութեան նիւթ
չունի:

Մի ամբողջ աղէտ է սա: Պարտաճանաչ հա-
յուհին անօգնական, ձեռքերը ծալած՝ հառա-
չում է այդ աղէտի ծանրութեան տակ: Ես չը
կարողացայ առանց խոր յուզմունքի կարգալ
ինչ ուղղած նամակի հետեւալ տողերը:

«Ինչո՞ւ չունենք եթէ ոչ տանեակներ, գո-
նէ մի քանի հատ ամաթերթի մանուկների
համար, լցված մեր կեանքին, մեր տօներին
յարմար պատմութիւններով, գոնէ անցեալի
ոգին ներշնչելին մեր օտարացած երեխաներին:
Միակ միջոցը մանկական թերթերն են, որոնք
կը պահեն թէ լիզուն և թէ աւանդութիւն-
ները»:

Ահա, ուրեմն, ինչ է պակասում մեզ — ման-
կական գրականութիւն: Մի ժամանակ նա կար,
մի ժամանակ նա մի դարաւ դարնալ պատկերն
էր տալիս: Բայց վրա հասաւ խորշակը, չո-
րացրեց բոլոր ծիւերն ու կողմները և մենք
դատապարտվեցինք մի իսկական մեծ անէծքի,
այն է լիզու ու խօսք չունենալ մեր երեխանե-
րի հետ խօսելու, նրանց մայրենի կաթին սո-
վորեցնելու համար:

Ինչո՞ւ այս եղաւ, ինչո՞ւ այսքան դժբախտա-
ցանք վերջին մի շարք տարիներ ընթացում:
Միթէ չունենք ուսուցիչներ, միթէ մանկա-
վարժութիւնը միանգամայն անհասկանալի է
դարձել մեզ:

Ո՛չ, այդ չէ կարելի ասել: Չը կայ ընդու-
նակութիւն, չը կայ կենդանի, ստեղծագործող
ոգի, խորշակը էր չորացնող ազդեցութիւնը
մտքի է մեր հոգու, մեր սրտի և ուղեղի
մէջ: Կատարեալ անապատ: Սահարա իր հրա-
շնէկ առաջին յորձանքներով: Եւ մենք ուղղւոյ
ենք որ մահվան այդ սարսափները մէջ, այդ
աղանձված հոգի վրա մանկական թարմ կողմ-
ներ բռնեն, դարձան, թերթիկներ բաց ա-
նեն, դառան կեանքը վարդապետ ծաղիկներ...

Վաղուց մենք մի ազգ ենք, որ հրաշքների
ենք սպասում մեր թշուառութիւնների ամոքե-
լու համար: Հրաշքներ չեն տրվում մեզ, իսկ
աշխատելու, սեփական դառն ջանքերով կեան-
քի ճանապարհ հարթելու հասկացողութիւնը
կարծես կորցրել ենք: Հրաշքներ չեն հարկա-
ւոր, այլ վառ սէր, անկեղծ, ջիւր ուղեղութիւն,
և այն ժամանակ ինչիւր չէինք անի...

Ինչ ամեն ինչ կորած չէ: Հայ ընտանիքնե-
րում դեռ կան անհատներ, որոնք լուռ են
ձեզ, որոնք պատրաստ են արձագանք տալու
դաստիարակչական հարցերին: Հայուհիներ կան,
որոնք ասում են. ձեր պարտականութիւնն է
ոչ միայն ցոյց տալ մեր անելիքը, այլ և մի-
ջոցներ հայթայթել, որ մենք առանց տանջվե-
լու, առանց զրկանքների կրելու, հնչու ու ար-
դիւնաւոր կերպով կատարենք մեր մայրական
կոչումը:

Այս խօսքերը ուղղվում են հայ խնտիկին-
ցիային, հայոց գրականութեան: Ձեզանից
ձուկ են պահանջում. և ինչ պիտի տանք,
միթէ, — օճ...

Նահապետական հայ կինը նահատակվում
էր իր ցեղի ինքնուրոյնութեան համար: Նրան
նահատակում էր տունը, նահատակում էր և
գրի աշխարհը: Ներսիս, օջախի մօտ, հա-
ւանդ նախադարձներն էին նրան տան-
ջում, կեղեքում, իսկ դրսում, իր տան շէմքին,
նրա վրա շողում էր զրկի, ծննդի սուրբ,
սպառնում էր մահապաշտի հարէմը:

Այժմ այդպիսի նահատակութիւն չէ պա-
հանջվում: Այժմ հայ կինը ասպարէզ պիտի
գայ ոչ թէ նահատակվելու, այլ մի սրբազան
գործ կատարելու, ասում է իմ նամակագիր
հայուհին և բացականչում է. «Առաջ եկէք,
խնտիկիններ տիկիններ, ծախեցէք ձեր դար-
դերն ու մարգարիտները մանկական թերթի
ու գրքեր հրատարակելու համար»:

Օ՛, ես համոզված եմ, որ այժման հերոսու-
թիւն չէ էլ պահանջվի հայ կնոջից: Բաւական
են և աւելի փորձ գործողութիւններ: Բայց այս
պաշտպան, զարգարանք ծախելու այս հրաւե-
րը չափազանց պերճաւոր է: Նա ցոյց է տա-
լիս թէ որքան մեծ պահանջ է մտացված մե-
զանում: Նա ցոյց է տալիս թէ որքան մեծ
է հայ մայրերի տաշանքը դաստիարակութեան

գործում: Եւ այդ տանջանքի ամենաբարձր
շնչար չէ արդեօք, որ հնչում է իմ նամակա-
գիր հայուհու այս տողերի միջից.

«Մայրեր, բաւական է, գոչենք բարձրաձայն,
որ մենք պատրաստ ենք, միայն տուէք մեզ
մանկան՝ դաստիարակելու եղանակ, տը-
ւէք մեզ ամապարի և գրքեր, տուէք, ժամա-
նակ ուղէ, օգնեցէք պարտականութիւնը թո-
ղած հայ կնոջ»:

Ահաւոր ճիշդ պէտք է պատասխանել նրան,
պէտք է շտապել, գնալ այդ օգնութեան:

Պատրաստ ենք...

Երէկ «Մշակ» մէջ կարդացի, որ շուտով

պիտի հրատարակվի մանկական ամսագիր,
«Հասկեր» անունով:

Խեղճ հայ երեխաներ: Արդեօք կարող եմ

հաստատաւան ասել ձեզ, թէ ձախտագիրը

բարեհաճ է դառնում դէպի ձեզ և ժողովում մի

ապագայ կայ, որ նայում է ձեզ...

1.

ԵՐԵՎԱՆԻ ԳՈՒՄԱՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երևանի քաղաքային դուման մարտի 30-ի
իր նիստում հաստատեց հետեւալ խնդրագրերը
միջնորդների խորհրդին և կողմնասեան Փո-
խարքային ներկայացնելու համար: Ահա այդ
խնդրագրերը:

- 1) Սահմանադրել ժողովի գումարումը ընդ-
հանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձա-
նաւորութեան սկզբունքներով: Կողմնասեան ազ-
գայնականութեան մասնակցութիւնը այդ ժողո-
վում Ռուսաստանի ներքին նահանգների ընա-
կիչների հետ համահաւասար: 2) Ոչ-դասա-
կարգային դէմակի հիմնարկութիւնների մոց-
նելը և քաղաքային կանոնադրութեան փո-
փոխումը լիակատար ինքնավարութեան սկզ-
բունքներով: 3) Երկուսնեքի դատարանի
ներմուծումը բոլոր գործերի համար, առանց
բացառութիւն անկողն քաղաքական, կրօնական,
պաշտօնական և մասնուր գործերի համար,
ընտրովի հաշտարար դատաւորների ներմուծու-
մը պաշտպանութիւն սկզբնական ընտրութեան
ժամանակ և պայմանական դատապարտութիւն.
դատաւարութեան թոյլտուութիւնը հաշտա-
րար դատարանական հիմնարկութիւններում
տեղական լիզուներով. դատաւորները պար-
տաւոր են իմանալ տեղական լիզուները, պաշ-
տօնականների պատասխանատուութիւնը ընդհա-
նուր հիմունքներով միայն դատարանի առաջ:
4) Մահվան պատժի վերացումը: 5) Զինու-
թական դատարանի, ստատկացրած պաշտպա-
նութեան և զինուորական դրութեան վերացու-
մը: 6) Հողի ազգայնացումը: 7) Արքունական
սուրբի վերացումը և բացառիկ իրաւունքների
տալը տեղական անհոյ և սակաւահոյ գիւղա-
ցիներին ընակութիւն հաստատել արքունա-
կան ազատ հողերի վրա և օգտվել նրանցով:
8) Ընդհանուր պարտաւորական ձրի տարբա-
կան ուսում կողմնասեան. մասնաւոր նախա-
ձեռնութեան կատարելալ ազատութիւն միայն
յայտնելով իշխանութեանը բանալու ամեն տե-
սակ տիպի և կարգի դպրոցներ կառավարչական
դպրոցների իրաւունքներով և առաւելութիւն-
ներով. ուսուցումը տարրական դպրոցներում
պէտք է լինի տեղական լիզուներով, ազգային
պատմութեան և գրականութեան ուսուցումը
միջնակարգ դպրոցներում ուրիշ առարկաների
հետ համահաւասար հիմունքներով, հաւասա-
րեցնելով տեղական լիզուները դատաւորների
պաշտպանական իրաւունքները և օրոնտութիւն-
ները ուրիշ դատաւորների հետ: 9) Անյապաղ
բանալ հայկական բոլոր եկեղեցական-ձխա-
կան դպրոցները, բարեգործական, կրթական
և հասարակական հիմնարկութիւնները մին-
հիմունքներով, որոնք գոյութիւն ունէին այն-
չե նրանց փակումը: 10) Բանալ Թիֆլիսում
բարձրագոյն դպրոց գիւսաւորապէս համալսա-
րան, երկու սեռի անձերի համար արեւե-
լեան բաժանումը: 11) Սահմանել հա-
սարակական կոնտրոլ բոլոր դպրոցներում: 12)
Ժողովների, գումարումների, ընկերակցութիւն-
ների, գործադուներ, դաշնակցութիւնների

ազատութիւնը և լեզուի ազատութիւնը ժողովներում, մամուլի ազատութիւնը ցէնզուրայից և նրա սլատախանաւորութիւնը միայն դատարանի առաջ, անձնաւորութեան և բնակարանների անձնականութիւնը: 13) Ութ ժամեայ բանտարկան օրվայ ներմուծումը և բանտարկների պետական պարտաւորական ապահովագրութիւնը: օրվարձի մինիմումի սահմանումը: 14) Տալ կանանց հաւասար իրաւունքներ տղամարդկանց հետ: դասակարգների ոչնչացումը: 15) Գաղաքացիական ամուսնութեան սահմանումը: 16) Մտցնել 25 մսկի ոստիկանութիւն նախկին հիմունքներով: 17) Գաղաքային ինքնավարութիւններին յանձնել ոստիկանութիւնը և զինւորականներին բնակարան տալու պարտաւորութեան կողմից հաւասարեցնել Կովկասի քաղաքները Ռուսաստանի ներքին անհանգիստների հետ: 18) Իրաւունք տալ առանց նախապէս թոյլտուութիւն ստանալու, լոկ յայտնելու եղանակով, բայց անել հրատարակչական, մարդասիրական և այլ կրթական հաստատութիւններ և հիմնել պարբերական հրատարակութիւններ: 19) Վերացնել բոլոր դաւանական և կրօնական սահմանափակումները: Ողջի ազատութիւն: Ազատութիւն հղվելու մայրենի լեզուով բոլոր պետական և հասարակական հիմնարկութիւններին մէջ: 20) Վերականգնել հայոց ինքնավար եկեղեցու իրաւունքները ու առանձնաշնորհումները համաձայն այդ եկեղեցու կանոններին և օրէնքներին: մասնագիտական հոգեւորականութեան իրաւունքները հաւասարեցնել բրիտանացի դաւանութիւնների հոգեւորականութեան իրաւունքներին հետ: 21) Վերադարձնել այն կալուածները և դրամագումները, որոնք պատկանում են հայոց եկեղեցիներին, վանքերին, նախկին եկեղեցական ծխական դպրոցներին և թեմական դպրոցներին, թէ գոյութիւն ունեցողներին և թէ փակվածներին: Վերադարձնել պատկեր, կալուածները մասնագիտական մզկիթներին: 22) Տեղացիները զինւորական ծառայութեան կանչվելու՝ կովկասեան երկրի սահմաններում: Կրճատել ծառայութեան ժամանակը մինչև երկու տարին և լայնացնել այն արտոնութիւնները, որ վայելում է ուսանող երիտասարդութիւնը զինւորական վերաբերմամբ: 23) Կովկասեան երկրի սահմաններից վարչական կարգով աքտորվածներին ընդհանուր ներում: 24) Վերացնել անցագրերը: 25) Գաղաքների սեփականութիւնը դարձնել տրանսիտական ձեռնարկութիւնը, բաց անելով դրա համար պետական կրթութիւն: 26) Մտցնել ընդհանուր պրօգրեսիվ հարկ եկամուտներից: 27) Վերացնել ակցիզը գործածութեան ամենամանրագծեալ առարկաներից և մինիմումի հասցնել միւս առարկաների վրա դրած ակցիզը: 28) Վերացնել կառավարչական տանուտէրերի պաշտօնը: Միաձայն հաստատելով այս խնդրագիրը, Դուման լրագրողութիւն սուրբ քաղաքապետ Յ. Մեյեր-Ալամարիանին, որ ներկայացնէ այդ խնդրագիրը Պետերբուրգում:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱՎՈՐՈՒԹԻՒՆ

I

(Տիկին Սիրանոյշ Բենիֆիկա. Մարիանա դրաման հայոց բնիկ վրա. Ներկայացում Ալեքսանդրօպոլում:

Հայոց դրամատուրգիան խաղում երեքըսրթի, մարտի 5-ին, Սիրանոյշի նպատակին ներկայացրեց Սոֆէ Էնիգարայի «Մարիանա» դրաման 4 գործողութեամբ:

Տիկին Սիրանոյշ իր Բենիֆիկա օրվայ համար ընտրել էր մի պէս, որ նրա դերասանական տաղանդի արտայայտութեան համար տարին էր առատ նիւթ: Մարիանայի դերի մէջ նա առիթ ունէր հանդէս բերելու հոգեբանական ուժեղ և բարդ ըմբռնումներ, որոնց մէջ փայլում էին նրա թէ մտածված ու զգացված խաղը և թէ բազմատեսակ յուզումներների գեղարուեստական պատկերացումները: Տիկին Սիրանոյշ իսկապէս ապրում էր բնիկ վրա, տարուբերվելով փոփոխվող զգացմունքների և տրամադրութիւնների մի հեղեղի մէջ: Դերասանուհու համար դա օտոն էր. հասարակութիւնը ընդունեց դերասանուհուն ջերմ ողջոյնով, մատուցեց նրան ծաղկեայ մի կողով և ներկայացման միջոցին բազմաթիւ անգամ վարձատրեց նրան բուն ծափահարութիւններով:

Օրերով Ալամարան աշող Կարա էր, հաճելի զեղուհի, որ խոր չէ նայում կեանքին և վերջնում է այն, ինչ որ կարելի է վերցնել: Տիկին Մեյերիան Տրինիդայի դերում բաւարար էր բոլորովին: Ներկայացման սկզբի առաջին խօսակցութիւնը, որ երկու դերասանուհիները

անում են Մարիանայի մասին, պէտք է լինէր աւելի բնական և հետաքրքրական:

Արէլեան Դանիէլի դերում հանդէս բերեց խորապէս զգացված և ուսումնասիրված մի տիպի բնական անձնաւորութիւն, որ բաժանում էր պիէսը գլխաւոր հերոսուհու ոչ միայն բաղդը, այլ և զգացմունքների արեւոտութիւնը: Պետրոսեան Սոսիկին դերում բնորոշ էր, տիպի բնական, խաղը մտածված: Ստեփանեան հետաքրքրական բնաւորութիւն և դէմք էր տուել Դոն Պաւլոյի տիպին: Աւետեան հանդէս բերեց մի ամբողջացրած տիպ բնորոշ գծերով: Օհանեան Լուսինայի դերում համապատասխանում էր պիէսի պահանջին:

Առհասարակ անսամբլը շատ բաւարար էր Դերերը չէ կարելի աւել, որ լաւ էին սերտված, բայց վատ չէին մտածված և ուսումնասիրված:

Պիէսը հետաքրքրական է, բայց կարօտ է կրճատումների: Ձանձրացնող էին աւելորդ ձգձգումները, առանց որոնց պիէսը ոչ միայն ոչինչ չէր կորցնէր, այլ և կը ստանար աւելի ոյժ և հետաքրքրութիւն:

Սիրող

II

Ալեքսանդրօպոլում, շաբաթ ապրիլի 2-ին, դերասան պ. Արմէնեանը, մասնակցութեամբ տիկ. Դուրեան-Արմէնեանի, դերասան Սոֆա-կի ու տեղիս սիրողների ժողովրդական տան դահլիճում, առաջին անգամ ներկայացրեց «Ճիւղաներ» կոմեդիա 3 գործողութեամբ: Սաղը ընդհանուր առմամբ շատ աղող էր. մասնաւոր վերջին գործողութիւնը, որտեղ պ. Արմէնեան և տիկ. Դուրեան-Արմէնեան այնքան աշող տարան իրանց դերերը, այնքան սրտի խորքից և բնական էր նրանց արտայայտած փոխադարձ ատելութիւնը, հոգեկան տանջանքը, որ հասարակութեան մեծ մասը արտաբերելու չար զգացվեց: Անձրեւ ու ցեխի պատճառով դահլիճը կիտով չար լիքն էր, բայց զուտ ինտելիգենտ հասարակութեամբ: Արմէնեան ամուսինները արժանացան բուն և երկար ծափահարութեան: Ար.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 4-ին Թիֆլիսի քաղաքային դու-ման իր նիստում լսեց քաղաքի կողմից Պետերբուրգ մեկնած պատգամաւորութեան հեռագիրը և ըննութեան ենթարկեց հօֆ-մայստէր Բուլիգինի պատասխանը: Դուման գտաւ, որ իսկապէս ներքին գործերի մինիստրի առաջարկը, որ իւր թէ դուման իրաւունք չունի ուղղակի դիմելու մինիստրին՝ առանց նախապայմանի միջամտութեան, ներկայ դէպքում հակասում է Կայսերական Բարձրագոյն ուղղակի, որ տրվել է սենատին ներկայ տալու փետրվարի 18-ին: Այդ ուղղակի հիման վրա ոչ միայն Թիֆլիսի կամ այլ քաղաքների դումաների նման պատկառելի հասարակական ընտրովի հաստատութիւններ, այլ և առանձին անհատներ իրաւունք ունենաւ առաջարկելու իրանց ծրագրերին ու կարծիքները պետական կազմի վերանորոգման մասին և այն էլ ոչ միայն մինիստրին, այլ նոյն իսկ Բարձրագոյն իշխանութեանը:

Ապրիլի 3, 4 և 5-ին «Кавказ» պաշտօնական լրագիրը լոյս չէր տեսնում. երէկ նա կրկին երկաց, բայց դեռ կէս թերթ միայն: Այդ անկանոնութեան պատճառը Կառավարչապետի դեւանի տպարանի բոլոր բանւորների գործադուլն է: Այդ բանւորները ներկայացրել են իրանց պահանջները Կովկասի փոխարքայի օգնական ու պաշտօնակատար գեներալ Մարամային: Նրանց պահանջները շատ են. մօտ 40—50 կէտ են պարունակում: Ի հարկէ դրանց մէջ ամենից առաջին տեղը ընդունում է 8 ժամվայ բանւորական օրը, իսկ գործերը բանուորների համար 6 ժամ աշխատանքը օրական: Յետոյ գալիս են մի շարք պահանջներ զուտ տնտեսական—վճարն աւելացնել, աւելորդ բանած ժամերի համար վճարել սովորական գնից 1½—2 անգամ աւելին և այլն: Ամենահամարելի առաջարկներն ապահանջներ են նաև փոքրահատակների աշխատանքի ժամերի կրճատման, բանւորների հետ քաղաքավարի վարվելու, նրանց գործատեղը նախ քան աշխատանքներն սկսելը՝ մաքրելու, առողջապահիկ պայմանները խստութեամբ գործադրելու և այլ հարցեր: Ըստ հանրապէս շատ գեղեցիկ տպաւորութիւն է թողնում կրթված ու ազնիւ սրտի տէր մարդ զու վրա, երբ տեսնում է, որ բանւորների պահանջները ոչ թէ մօղայի հետեւում մի քիչ

անհամութեան հասած ձեւերի արդիւնք են, այլ իրանց դրութիւնից և շրջապատող պայմաններից բխած ու հնարաւոր պահանջներ են: Եթէ ոչ անգլիական կամ գերմանական բանւորի բոլոր պահանջները թարգմանել ու դնել Կովկասի բանւորների համար, առանց ունենալու այդ եւրօպական բանւորների կուլտուրական հասունութիւնը—կը լինի ոչ միայն անմտութիւն, այլ և ծիծաղելի:

Կուրանի շրջանի տեղական կառավարութիւնը որոշել է յաւերժացնել իր շրջանի նախկին կառավարի գեներալ Մարամայի վարչութեան յիշատակը: Այդ նպատակով մտնող շրջանում ստորագրութիւն է բացված և նուէր է հաւաքվում, կազմելու մի դրամագումար, որի տոկոսներով ստիպելու ենք կամ թողալենք հիմնվել այդ համակրելի անձի անունով:

Պետերբուրգի գիտութիւնների Կայսերական Ակադէմիան բոլորովին դրականապէս է լուծել մաթեմատիկայի տպագրական լեզուի բացարձակ ազատութեան խնդիրը: Ակադէմիան եկել է այն եզրակացութեան, որ մաթեմատիկային էլ պէտք է տալ նոյն իրաւունքները, ինչ որ ունեն վերլուծականը՝ աղատ խօսելու, գրելու և հրատարակելու իրանց լեզուով: Ակադէմիան այդ մտքով առաջարկ է անում մինիստրների կոմիտէին:

Ինչպէս յայտնի է, Ֆինլանդական գիւղերական շրջանը որոշված է միացնել Պետերբուրգի շրջանին: Ֆինլանդացիները խնդրել էին, որ իրանց զինւորական վարչութիւնը, համարվելով Պետերբուրգի շրջանի մի բաղադրիչ մասը, միայն, առաջվայ նման, Հէլսինկի-Ֆորսում: Զինւորական խորհուրդը մերժել է Ֆինլանդացիների այդ խնդիրը և հրամայել, որ առաջիկայ մայիսի սկզբներին Ֆինլանդական գիւղերական վարչութեան բոլոր գործերն ու թղթերը Պետերբուրգ փոխադրվեն:

Պետերբուրգի բարձր պաշտօնեաների շրջանում լուր է պտտում, որ մտադրութիւն կայ կրճատել կամ բոլոր պաշտօնեաների թիւը 20—25%-ով և կամ թիւը նոյնը թողնելով, պակասեցնել նրանց սոճիքները նախկին չափի 180%-ը: Նոյն շրջաններում խօսում են, որ երկրորդ ծրագրին աւելի համակրանք է վայելում, որովհետև առաջին դէպքում շատ շատերը, միայնով անպաշտօն, կը շատացնեն ընդհանուր թիւը: Դիմադիր տարրերի թիւը, այն ինչ երկրորդ ծրագրի թէն ղեգիւրութիւնը կը պատճառէ թեթեւ կերպով, բայց չէ կարող առաջացնել այնպիսի վճռական հակառակորդներ, ինչպէս առաջինը, որովհետև պաշտօնեաներին արմատապէս չի զրկի հացից:

Գօրու գաւառի Գրօմի գիւղում օս ամբողջ, մօտ 60 մարդ, մարտի 23-ին յարձակվեց Վրադիմիր Կորախիձէ աղւակահի տան վրա, ջարդ ու փշուր արեց բոլոր դռներն ու պատուհանները, իսկ տան տերօղը լաւ ծեծ տուեց: Թիւրքի գաւառի Հին-Գաւաղի գիւղում գիւղացիները մարտի 23-ին փակեցին գիւղական կառավարութիւնը և մինիստրական դպրոցը: Մարտի 24-ին նոյն գաւառի Գրէմի, Մարուէ և Ալմաթի գիւղերի բնակիչները, մօտ 2000 մարդ, հաւաքվելով, ստորագրութիւն տաւան կալուածատէրերից, որ ամենքն էլ հաւասարապէս պէտք է օգտվեն հողերից. մի և նոյն ժամանակ նրանք սպառնալիքներով փախուցրին պրիստաւերն, փակեցին գիւղական կառավարութիւնը և մինիստրական դպրոցը:

«P. B.» լրագիրը յայտնում է, որ անցաւ դերերի գոյութիւն ունեցող սիւսմէր փոփոխութեան ենթարկելու համար օրէնքներ ու կանոններ մշակող յանձնաժողովը վերջացրել է իր դրամուտները, մշակել անցաւորի նոր ձեւեր և օրէնքներ և յանձնել Մինիստրների Կոմիտէին ըննութեան, իսկ ապրիլի վերջերին կը յանձնվի Պետական Սորբոնի տնօրէնութեանը:

«Daily Expr.» լրագիրն հաղորդում են Մօսկվայից, որ Մեծ Իշխան Մեդլի Ալեքսանդրովիչի թողած ժառանգութիւնը, որ գլխաւորապէս հողային կալուածներէն է բաղկացած, գնահատվում է 439 միլիոն ռուբլու: Այդ գումարից 50 միլիոն ռուբլու բաժին է ընկնում այլապես Մեծ Իշխանուհուն:

Լուր կայ, որ մօտ ապագայում նշանակվելու են վերաբնութիւններ Կարմիր Սալի

տեղական բոլոր մասնաճիւղերի գործունէութեան: «РУСС»-ը հաղորդում է, որ այդ վերաբնութեան արդիւնքները պէտք է հրատարակվեն:

«Слово» լրագիրը հաղորդում է, որ Ֆինլանդական սենատը որոշել է զաղարկել «Финляндская Газета» պաշտօնական լրագիրն տրվող տարեկան նպատու, աչքի առաջ ունենալով նրա բնած հակա-ֆինլանդական ուղղութիւնը:

ՅԱՐԻՑԻՆԻՑ մեզ գրում են. «Կերակրի, մարտի 27-ին, տեղիս աղօթատանը հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց նորիս վախճանված հանգուցեալ Գրիստափոր Միքայէլեանի յիշատակին: Մի երիտասարդ ճառ խօսեց»:

ԳԵՏԱՇԵՆԻՑ (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Մարտի 24-ից տեղիս արքունական տարրական երկրպետան ուսումնարանը փակված է, որովհետև շատ աղքատ ծնողներ չեն կարողանում ուսումնասիրված տալ: Ժողովուրդը պահանջում է ուսուցիչներից պարագլի ձրի, ինչպէս առաջինը եղել է. բայց նրանք չը կարողացան ժողովուրդին բաւարարութիւն տալ առանց իրանց վարչութիւնից իրաւունք ստանալու, ուստի ստիպված եղան դադարեցնել պարագլուները, և միանգամից փակեցին ուսումնարանը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԵՈՒՐՁԸ

Խաղաղութիւն դեռ չի լինելու: Անգլիական մամուլի կարծիքով, անհնար է, որ խաղաղութեան բանակցութիւններ սկսվեն Ռուսաստանի և Եւրոպայի միջև, այդ պատճառով միջամտութեան առաջարկութիւնը անխուսափելի կերպով պէտք է մերժում ստանայ թէ մէկ թէ միւս կողմից: Եւրոպայի, ծանր գոհեր կրելով, այժմ արդէն չէ կարող բաւականապէս նրանով, ինչին համաձայն էր առաջ: Բացի դրանից, որպէս յաղթող, նա ցանկանում է ինքը թելադրել խաղաղութեան պայմանները, կարծիքով, որ այդ դէպքում նա աւելի շատ կը ստանայ: Իսկ Ռուսաստանը, չը կորցնելով յաղթութիւն տանելու յոյսը, նոյնպէս մերժում է բոլոր առաջարկութիւնները, ում կողմից էլ անվին դրանք: Միւսմիտական կապիտալիստները դեռ նորեքս յայտնեցին Դէլիսէին, որ եթէ Ռուսաստանը խաղաղութիւն չէ ուղղում կապիլ դրամական տուգանքի պատճառով, որ Եւրոպայի անպատճառ կը պահանջէ, իրանք պատրաստ են պարտք տալ ուսուց կառավարութեանը անհրաժեշտ գումարը այն պայմանով, որ Ֆրանսիական արդիւնագործական ապրանքներին մի քանի առաւելութիւններ տրվին ուրիշ երկրներին ապրանքներից: Սակայն այդ առաջարկութիւնը, նոյնպէս և գերմանական նոյնամասն առաջարկութիւնը բաց է բաց մերժվեց: «Բարի ծառայութիւնների» անդահաւետութիւնը ակնհեր է, բայց յամանայն դէպս պատերազմը շարունակելուց աւելի է ծանր և ոչ ստի: (P.)

Նախաձեռնութիւնը Բոֆսլիքսիւնիս Է: Պարիզի «Burr. Béd.» լրագրին հեռագրում են. «Ոչինչ տեղեկութիւններ չէին ստացված մարտի 29-ի ընթացքում թէ ուր էին գտնվում Բօֆսլիքսիւնիս և Տօֆօի նաւատորմերը: Լրագիրները հաղորդում են, որ դէպի Անամթա կղզին եկան չորս առաւելութիւններ, որոնք լողում են գերմանական դրօշակի տակ: Կրկին 12 փոխադրիչներ են սպասվում այնտեղ, և նրանց համարուց յետոյ Բօֆսլիքսիւնիս էսկադրան կը շարունակէ իր ճանապարհը: Դրանից եզրակացնում են, որ էսկադրան մարտի 29-ին գտնվում էր վերջոյի շնալ կղզու շրջանում: Մալակիան ջրանցքով մեր նաւերի անցնելու պատճառով ծովապետ Ֆուրիէ այն կարծիքը յայտնեց, որ Բօֆսլիքսիւնիս ուղղապէս գրութիւնը հրաշալի է: Նրան է պատկանում յարձակում գործելու նախաձեռնութիւնը, որի համար վայրելանք կարող է ընտրել նա, և ոչ թէ հակառակորդը: (Tux.)

Պաշտպան Եւրոպական Է: Պարիզի մի քանի լրագիրներ այդ վերնագրով մի շարք հեռագիրներ տպեցին Պետերբուրգից: Ահա թէ ինչ է հեռագրում «Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը: «Պաշտօնական տեսակետով այն մտքին է յանդու, որ պատերազմ շարունակելուց կը շահվի միայն Ռուսաստանը. սպառնելով Եւրոպայի ոյժերը,

